

## ՓԱՓԱԶՆԱԿԱՆ ՍԱՆԵՐ

- Յ. Գազանճեան
- Մ. Մազոգնեան
- Պ. Նուրիիանեան
- Հ. Ռսկեան

Այս տարի իրենց համալսարանական շրջանն աւարտած են. ՊՊ. Յ. Աճմեան՝ նկարչութեան ընթացքը, ստանալով նկարչութեան Ռևուցութեան առաջին վկայականը (Professore di pittura e di decorazione). Յ. Թաշճեան՝ թշչկութեան, Պ. Մարիմեան, Ա. Տէյիրմէնճեան, Հ. Շիրնեան՝ ճարտարագիտութեան: Ասոնց պէտք է յաւելու անունները Պ. Յ. Գումրուեանի, որ անցեալ տարի աւարտեց Դորինոյի Ալևտարական Բարձրագոյն Վարժարանը: Պ. Ս. Մարտիրոսեանի որ նոյնպէս անցեալ տարի աւարտեց Միլանի մէջ ճարտարագիտութեան ընթացքը: Պ. Ա. Լազարեանի որ աւարտեց Վենետիկոյ Առեւտրական Բարձրագոյն Վարժարանը. Պ. Պ. Աղոյնեանի որ աւարտեց Բատուայի թշչկական Համալսարանը. Պ. Յ. Ծովագիտանի որ իր ուսումը կատարեց Հռոմ:

Մուրատ - Շիափայէլեան վարժարանին աշակերտութիւնն զատ յիշելու է միանդամայն Միլանի Միխիթարեան վարժարանին ալ. հռն 1924-28 շրջանին դաստիարակութեան ութսունի մօտ պատանիներ, յանախելով ցաղաքին Հիւսուածարանութեան և Մետարգի բարձրագոյն դպրոցները, Արհեստանոց - Դպրոցները, կամ դործատուներն իսկ գործնականապէս արհեստի մը մասնագիտութիւնը սորվելու համար<sup>1</sup>: Զանց կընենց յիշել Գաւազգիւղի և ապա Ֆիէսաոյ փոխազրուած Որրանոցին աշակերտութիւնը և ցարդ ալ թերա Միխիթարեան դպրոցը յաճախողները:

1. Տե՛ս Բարձ. 1928, էջ 62.

Այսպէս ուրիշն անազմուկ աշխատանքի լծուած և անխոնջ գործունէչութեամբ, ամէն տարի Միխիթարեան վարժարանները կը յանենեն ազգին իր իսկ զաւակները որոշեալ թուով մը՝ իրենց արամադրելի ժեռնառութեան համեատ, յես պատրաստելու զանոնց կեանցի ասպարէզին, իրենց մտածութիւնն ըլլալով միայն ծառայած ըլլալ ազգին յառաջադիմութեան:

ԽՄԲ.

ՊՈՂԻՆ ՆՈՒՐԱՐ ՓԱՇԱՑԻ ՆՈՒԷՐԸ  
ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆՍ

Ն. Վ. Գոյոս Նուպար Փաշա Միհարամութեամս նուիրեց իւղամենիկ գեղեցիկ պատկեր մը, որ կը օբրկայացմէ Ս. Լազարու մեր վաֆը, Ակարուած Jean-François Raffaelli արուեստագէտէն, որ ապարա է 1850օմ 1924 տարիներու շրջամիթ:

Գոյոս նուպար Փաշա, միշտ պատրաստակամ և միշտ ապատածնո՞ւ բարերարութիւն և համելի նուէրներ կատարելու մէջ, իմամալով ու տեսնելով ցուցահամելէսի մը մէջ սոյդ պատկերը, իսկոյն մտածել է իմաստով յարմար վայր մը այդ Ակարը համար, ու յարմարագոյն վայր այլապէս կարելի չէր գտնել բայց եթէ Ս. Լազարու շրջամակիմ մէջ. և նոն զննանցից այդ Ակարը որով թէ պատկերը կը պահէ իր թարմութիւնն և երամզներու ներգաղակութիւնը Ս. Լազարու լուսագիդ ու դամար միմուրափիմ մէջ. և թէ իմքնիմ զննենութեան ապու ստուծագիծը, մէկ կողմէն Տալուշ և Գյանձօսօն մասը, իսկ մինչ կողմէն չասարակաց գարտէզ և Տ. Էլենա կզզի:

Միհարամութիւնս սոյթ էշերում մէջ ալ կը յայտաւէ իր շառագակութիւնը Ն. Վ. Գոյոս նուպար Փաշայի, որ իմամատար և բարերար ըլլակէ զատ ազգի որդինու և ուսամութեան պահամանու և կենացացածու է ազգային գիտական և պատմական յիշատակների կամ բարեզնորդ իր ամումը, զամբիս շրջագակիմ և այցելութերու սրտիմ մէջ:

